ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՐԱՐ (ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ) ԾՐԱԳԻՐ
«ՆԵՔՍԹ ՋԵՆ ՍՊՈՐՏՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից
իրականացվող 5 ամյա զարգացման
2024թ.

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Տեղեկություններ գործարար (ներդրումային) ծրագիրը իրականացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) մասին,

1.1.1. Կազմակերպության լրիվ անվանումը. «Նեքսթ Ջեն Սպորտս»,

1.1.2. Կազմակերպության ձևը. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

1.1.3. Կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը. Ընկերությունը ստեղծվել է 2024թ. փետրվարի 7-ին,

1.1.4. Կազմակերպության գրանցման վկայականի համարը. 269.110.1368932,

1.1.5. Գրանցման վայրը և տարեթիվը. Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 2024թ.,

1.1.6. Գործունեության իրականացման վայրը. Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,

1.1.7. Փոստային հասցեն. ՀՀ, ք.Երևան, Գարեգին Նժդեհ փ. 34, 0006:

1.1.8. Նույնականացման ծածկագիրը՝ 54563549, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02315867,

1.1.9. Տվյալներ. +37412343434 էլեկտրոնային հասցե՝ ngensports@gmail.com, վեբ կայք՝ ngensports.com,

1.2. Գործարար (ներդրումային) ծրագիրը հաստատվել է ----կազմակերպության ընդհանուր ժողովի 20 թ. –ի N -որոշմամբ:

Գլխավոր տնօրեն՝ Ալֆրեդ Սաղոյան, հեռ. +37494090999

Հաշվապահական ծառայության ղեկավար՝ Աշոտ Գրիգորյան, հեռ.+37477474192:

2. Կազմակերպության կողմից գործարար (ներդրումային) ծրագրի նպատակները և խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման նպատակով «Նեքսթ Ջեն Սպորտս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024թ. ապրիլի 2-ին պայմանագիր է կնքել աշխարհահռչակ իտալական Թուրինի Յուվենտուս ֆուտբոլային ակումբի հետ՝ Հայաստանի Հանրապետությունում Յուվենտուս ֆուտբոլային ակադեմիա հիմնելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2024թ. 1388-Ա որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանն ուղղված մեր ընկերության մեծամաշտաբ ներդրումային ծրագրին: Նույն որոշմամբ ,,Հրազդան Մարզահամալիր,, ՓԲ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը՝ իր հաշվեկշռում գտնվող անշարժ գույքով, ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է «Նեքսթ Ջեն Սպորտս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

«Նեքսթ Ջեն Սպորտս» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

նպատակները և խնդիրներն են.

1) ՀՀ-ում նպաստել մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը:
2) Ավելացնել ՀՀ-ում օգտագործվող արդի և միջազգային չափանիշներին համապատասխանող ֆուտբոլային ենթակառուցվածքների թիվը: Կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան ֆուտբոլային մարզադաշտ և ենթակառուցվածքներ, որոնք իրենց մեջ կներառեն հանդերձարաններ, վերականգնողական զոնա, խանութ, սրճարան, մարզասրահ, փարքինգ և այլն: Ֆուտբոլային մարզադաշտը հագեցած կլինի նորարարական ֆուբոլային տեխնոլոգիաներով:

3. Տեղեկատվություն գործարար (ներդրումային) ծրագիրը իրականացնելու մասին.

3.1 Սույն ներդրումային ծրագիրն իրականացվելու է անմիջականորեն, կապալային, մատակարարման և այլ պայմանագրեր կնքելու միջոցով:

3.2 Գործարար (ներդրումային) ծրագրի նորմատիվաիրավական կարգավորումը.

«Նեքսթ Ջեն Սպորտս» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Տեղական Ինքմակառավարման մասին ՀՀ օրենքով, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, կարգադրություններով, որոշումներով, ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Նեքսթ Ջեն Սպորտս» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3.3. Ծրագրի շրջանակում առաջիկա հինգ տարիներին «Նեքսթ Ջեն Սպորտս» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

2025-2026թ. ընթացքում իրականացնելու են սեյսմիկ և գեոդեզիական ուսումնասիրություններ, նախագծային աշխատանքներ, կապալառուի ընտրություն և շինարարական աշխատանքների նախապատրաստում:

2027թ. կմեկնարկեն մարզադաշտի կառուցապատման աշխատանքները:

2028թ. ավարտին մարզադաշտը և անհրաժեշտ հարակից ենթակառուցվածքները կհասցվեն նախագծված վերջնական տեսքին: Կավարտվի տարածքի բարեկարգման և կանաչապատման

աշխատանքները և անհրաժեշտ սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերումը:

4. Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

4.1 Բյուրեղավան խոշորացված համայնքում կգործի միջազգային չափանիշներին համապատասխան ֆուտբոլային մարզադաշտ՝ իր համապատասխան ենթակառուցվածքներով:

4.2 Համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

4.3 Միջազգային չափանիշներին համապատասխան ֆուտբոլային մարզադաշտում հնարավորություն կլինի անցկացնել Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբի և առաջին խմբի ֆուտբոլային հանդիպումներ, ինչը կնպաստի դեպի համայնք ներգնա զբոսաշրջության զարգացմանը:

4.3 Բացի ֆուտբոլային խաղերից, մարզադաշտում կարող է կազմակերպվել համերգներ, փառատոներ և այլ միջոցառումներ՝ ներգրավելով տարբեր այցելուների և օգնելով ցուցադրել տարածքի յուրահատուկ մշակույթը:

4.4 Կբարձրանա համայնքի վարկանիշը, ծրագիրը կնպաստի համայնքի անշարժ գույքի արժեքի բարձրացմանը՝ բարելավված հարմարությունների և պահանջարկի շնորհիվ:

4.5 Մարզադաշտի կառուցումը կնպաստի համայնք նոր ներդրումներ ներգրավվելուն, այդ թվում՝ նոր բնակելի համալիրների կառուցում, ռեստորանների, սրճարանների հիմնում և այլն:

4.6 Ժամանակակից և գեղեցիկ մարզադաշտը կարող է դառնալ համայնքի նոր խորհրդանիշը:

5. Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացման ռիսկերը և մեղմացման միջոցառումները

5.1. Սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում հնարավոր ռիսկերը.

Ծրագիրի իրականացման ռիսկեր են համարվում վերոնշյալ միջոցառումների շրջանակներում շինարարական աշխատանքները իրականացնող կապալառուների կողմից ժամկետների ուշացումը, ինչպես նաև մատակարար ընկերությունների կողմից մատակարարման ժամկետների ուշացումը:

5.2. Հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով իրականացվող միջոցառումները՝

Հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով ընկերությունը մտադրված է նոր կապալառուների և մատակարարների հետ պայմանագիր կնքելը:

տնօրեն՝ **Ա. Սադոյան**